չած՝ պայտած, կրունկը փայտե, տակից երեք լայնգլխանի և վերևից երկու տափակգլխանի մեխերով ամրացրած։ Կանայք սովորաբար մեծ մասամբ բոբիկ էին ման գալիս և միայն ձմեռն էին հագնում կոլպա և չմոշկ կամ ուխտատեղի գնալիս, այն էլ հագնում ոչ թե ճանապարհին, քանի որ չմոշկավ քայլելը դժվար էր, այլ միայն ուխտատեղիում[15]։



Գծ. 6. Տրեխ երեքթանի։



Գծ. 7. Չմոշկ տղամարդու։



Գծ. 8. Չմոշկ կանացի։

---

15 Ե. Լալայեան, Սիսիան, Թիֆլիս, 1898, էջ 105։ Լալայեանի այդ տեղեկությունն ինչպես երևում է չէր տարածվում ամբողջ Զանգեզուրի վրա։ Բնությունն այնքան աննպաստ է ոտաբոբիկ ման գալու համար. քարոտ, փշոտ տարածություններում ոտքերը պիտի վիրավորվեին։